25.10.2021
348-17

Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի նախագահ
Արգիշտի Քյարամյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Քյարամյան,

2021 թվականի սեպտեմբերի 6-ին Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազությունից Ինֆորմացիայի ազատության կենտրոնին տեղեկացրել են, որ սույն թվականի սեպտեմբերի 3-ին ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյանի հաղորդման հիման վրա ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում նախապատրաստված նյութերով՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազությունում ընդունվել է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի հատկանիշներով թիվ 10203121 քերական գործը հարուցելու մասին որոշում։

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ի՞նչ փուլում է գտնվում է քրեական գործի քննությունն այս պահին։
2. Ի՞նչ ժամկետներում կավարտվի այն։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պատրաստ ենք բոլոր նյութերը տրամադրել քրեական գործի անաչառ և համակողմանի քննությունն ապահովելու համար։

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am